

**ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ԴԵՐՈՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Լենա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու,

Բանալի բառեր՝ տնտեսական աճ, վարկ, աշխատանքի արտադրողականություն,
անդամթերքի անվտանգություն, սուբսիդավորում

Ցանկացած երկրի իրական հատվածում իր ուրույն տեղն ու դերը ունի գյուղատնտեսությունը, որը տնտեսության զարգացման, զբաղվածության ապահովման և բնակչության ընդհանուր կենսամակարդակը պայմանավորող կարևորագույն ոլորտներից մեկն է: Այն կարևոր դերակատարում ունի Հայաստանի տնտեսության զարգացման և կայունացման գործընթացում՝ ապահովելով երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 20%-ը, զբաղվածության շուրջ 40%-ը, և միաժամանակ ունենալով արտահանման մեջ գյուղատնտեսական ու դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքների ավելի քան 20%-ը: Ջարգացած երկրներում գյուղատնտեսությունը դիտվում է, որպես ռազմավարական ճյուղ, և որի բարելավման համար օգտագործվում են պետական բյուջեի միջոցները: Ուստի ելնելով տնտեսապես զարգացած երկրների տնտեսավարման փորձից, և հաշվի առնելով Հայաստանի կենսագործունեության ու տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունը, անհրաժեշտ է ուսումնասիրել այդ ոլորտի ֆինանսավորման ներկայիս մեխանիզմները և արտադրվող արտադրանքի արտահանման խթանմանն ուղղված պետական քաղաքականությունը՝ կապված հիմնականում վարկավորման ու ներդրումային գործընթացների հետ: Գյուղատնտեսության ոլորտը պայմանավորված է փոքր գյուղացիական տնտեսություններով, որոնք խոցելի են ոչ միայն շուկայից եկող տնտեսական /ապրանքի գին, պահանջարկ/ և բնակլիմայական պայմաններից, այլ նաև պետական ֆինանսավորման ու նպատակադրված սուբսիդավորման սխեմաների բացակայությունից և մատչելի վարկային միջոցների անհասանելիությունից:

Անհրաժեշտ է նշել, որ տնտեսության կարգավորման առումով, մի շարք խնդիրների լուծման համար երկրում բացակայում է համակարգված և հետևողական քաղաքականության իրականացումը՝ ուղղված գյուղատնտեսության ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովմանը, որի հիմքում ընկած է ֆինանսավորման հարցը: Ընդհանուր առմամբ, այժմյան պայմաններում, Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեծ մասը՝ մոտ 97%-ը, արտադրվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ մնացածը՝ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առև-

տրային կազմակերպություններում: Նշենք նաև, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը 2014թ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 6,5%-ով՝ կազմելով 919,1 մլրդ դրամ, այդ թվում բուսաբուծությունում՝ 572,8 մլրդ, դրամի, անասնաբուծությունում՝ 346,3 մլրդ դրամի չափով: Հատկապես վիճակագրական տվյալները վկայում են, որ ունենալով 340 հազար գյուղացիական տնտեսություն, որոնք մշակում են 400 հազար հա հող, և որտեղ արտադրանքի էժանացման ճանապարհն արդյունավետության բարձրացումն է, պահանջվում է գյուղացիական տնտեսությունների խոշորացում և որի արդյունքում կնվազի նաև լրիվ ինքնարժեքը, իսկ դրանց հասնելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական նշանակության բոլոր հողերի պարտադիր մշակման քաղաքականության իրականացումը: Չնայած վերոնշյալ ցանկություններին, պետք է նշել այն իրողությունը, որ դեռևս ցածր է գյուղատնտեսական հողատեսքերի, հատկապես վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը: Այսպես, 2014թ. հողային հաշվեկշռի տվյալներով հանրապետությունում վարելահողերի տարածքը կազմել է 448,4 հազ. հա, իսկ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն էլ իրենց հերթին կազմել են 332,7 հազ. հա, նախորդ տարվա 318,1 հազ. հա-ի դիմաց: Այսինքն դա վկայում է այն մասին, որ 115,7 հազ. հա վարելահողերը նպատակային չեն օգտագործվում: Վարելահողերի աննպատակ օգտագործումը պայմանավորված է ոչ միայն գյուղացիների տրամադրության ֆինանսական միջոցների սղությամբ, արտադրության ցածր եկամտաբերությամբ, վարկերի ծեռք բերման դժվարությամբ, այլ նաև մեքենայական աշխատանքների իրականացման դժվարությունով, հողատեսքերի մասնատվածությունով, ոռոգման ջրի բարձր սակագնով, գյուղմթերքների անմատչելի իրացումով, և որոշ մարզերի սահմանամերձ տարածքների վտանգվածությամբ¹:

Որպես գյուղատնտեսության զարգացման մեծ մարտահրավեր հանդիսանում է գյուղատնտեսական աշխատանքների ցածր արտադրողականությունը, որի բարձրացման ուղղությամբ գործող քայլերում կարևորվում է առաջավոր տեխնոլոգիաների կիրառումը, ինչպես գյուղատնտեսական մթերքների արտադրության, այնպես էլ դրանց հետագա վերամշակման փուլում: Գյուղատնտեսության արտադրողականությունը և ստեղծված արդյունքը մեծապես պայմանավորում է սննդանթերքի գները և դրանով իսկ ազդում բնակչության կենսամակարդակի վրա: Այն իր ազդեցությունն ունի նաև տնտեսության մյուս հատվածների վրա, հատկապես որոնք ընդգրկված են սննդամթերքի վերամշակման և արտահանման ոլորտներում:

Գյուղատնտեսության դերը կարևորվում է նաև երկրի պարենային ան-

¹ ՀՀ ԱՎԾ: www.armstat.am

վտանգության ապահովման տեսակետից, որտեղ նախատեսվում է պարենային ապահովման մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում:

Գյուղատնտեսության զարգացումը իր անմիջական ազդեցությունն է ունենում ոչ միայն սննդամթերքի արտադրության, այլ նաև ոլորտում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության և նրանց եկամուտների ապահովման, ինչպես նաև բնակչության աղքատության մակարդակի նվազման գործում: Չնայած նշված որոշ տնտեսական աճին գյուղատնտեսությունը Հայաստանում մնում է դեռևս խոցելի ոլորտներից մեկն, որը կարիք ունի հետևողական պետական քաղաքականության:

Մի շարք խնդիրների լուծման ուղղությամբ երկրում բացակայում է համակարգված և հետևողական քաղաքականության իրականացումը՝ ուղղված ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովմանը, որի հիմքում էլ ընկած են գյուղատնտեսության ֆինանսավորման հարցը: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որը կապահովի մասնավոր կապիտալի ներգրավումը գյուղատնտեսության ֆինանսավորման գործում, քանի որ ավելի կարևոր է մասնավոր կապիտալի ընդգրկումը այս գործում՝ լուծելու ֆինանսավորման գործընթացի անընդհատության ապահովումը:


Գյուղատնտեսության ֆինանսավորումը պետք է նպատակաուղղվի՝

- մաշված և հին սարքավորումների փոխարինմանը,
- նոր տեխնոլոգիաների ներդրմանը,
- գյուղատնտեսական արտադրության ընդլայնմանը,
- արտադրության նոր տեսակների ձևավորմանը:

Ոլորտի ֆինանսավորումը վերաբերվում է ոչ միայն և ոչ այնքան պետական սուբսիդավորմանն ու պետական մասնակցությամբ տարբեր ֆինանսավորման և վարկավորման ծրագրերի իրականացմանը, որքան որ մասնավոր կապիտալի ընդգրկմանն այս գործընթացին:

Գյուղատնտեսությունը զգալի մասնաբաժին ունի Հայաստանի ՀՆԱ-ի մեջ և կարող է էապես նպաստել տնտեսական հետագա աճին: Չնայած, գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ նվազել է 2000թ-ից սկսած, այնուամենայնիվ այն կազմում է ավելի քան 20%: 2000-2014թթ. գյուղատնտեսական արտադրանքը կայուն աճ է արձանագրել, բացառությամբ 2009թ.-ին, որը պայմանավորված է ֆինանսական ճգնաժամով: Ճգնաժամի հաղթահարումից հետո եղել է տնտեսական աճ համապատասխանաբար՝ 2012թ. 19,1 %, 2013թ. 19,3%, 2014թ. 17,7%²: (Տես գծապատկեր)

² ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքեր www.armstat.am



Գծապատկեր 1. Գյուղատնտեսության համախառն արտադրանքը և մասնաբաժինը ՀՆԱ-ում (2009-2014թթ.)

Գյուղատնտեսության արտադրանքի ավելացումը տնտեսական աճի հետ մեկտեղ, մեծապես նպաստել է ոչ միայն քաղաքային բնակչության եկամուտների աճին, այլև նաև աղքատության մակարդակի նվազմանը: Առանձնակի է գյուղատնտեսության դերը աղքատության հաղթահարման գործում: Գյուղատնտեսության զարգացումն իր անմիջական ազդեցությունը ունի ոչ միայն սննդամթերքի արտադրության, այլ նաև ոլորտում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության ու նրանց համապատասխան եկամուտների ապահովման և աղքատության մակարդակի նվազման գործում: Չնայած հանրապետությունում պարենամթերքի հիմնական տեսակների մասով ինքնաբավությունը ունի բարձր մակարդակ, սակայն այն չի համապատասխանում կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներին, մասնավորապես աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշներին: Ըստ ԱՎԾ-ի տվյալների, 2012 թվականին, բնակչության 32,4%-ը եղել է աղքատ, նրանցից՝ 13,5%-ը՝ շատ աղքատ, իսկ 2,8%-ը՝ ծայրահեղ աղքատ: 2012 թվականին 2008թ-ի համամատ աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում աճել է 4,6 %-ով, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 4,9%-ով: Սակայն շատ մեծ է աղքատության մակարդակի տարբերությունը ըստ մարզերի: Աղքատության մակարդակը բարձր է այն ընտանիքներում, որոնք հողազուրկ են կամ ունեն փոքր հողակտորներ, հողի ոռոգման սահմանափակ հնարավորություն, չունեն կամ ունեն շատ քիչ գյուղտեխնիկա կամ արտադրական հնարավորություններ և հիմնականում ֆինանսական աղքուր-

ները սահմանափակ են³: Ըստ գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակի, 2014թ. գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը կազմել է երկրում զբաղվածների 37,3%-ը: Պայմանավորված զբաղվածների թվաքանակի անկմամբ, այս ցուցանիշը 2009թ.-ից որոշակի անկում է ապրում: Երկրում զբաղվածների շուրջ 40%-ի եկամուտների ձևավորման աղբյուր է հանդիսանում գյուղատնտեսությունը, որի զարգացման տեմպերից ուղղակիորեն կախված է ոլորտ անձանց կենսամակարդակի աճը:

Մեծ է գյուղատնտեսության դերը արտահանման ոլորտում, առանձնակի շեշտադրումը պետք է դրվի այն ապրանքատեսակների վրա, որոնք ունեն մրցակցային առավելություններ: Պետության աջակցությունը այստեղ, բացի հարկային և մաքսային արտոնություններից պետք է լինի նպատակային ֆինանսավորում, օտարերկրյա իրացման շուկաների բացահայտում և ապրանքների արտահանման կազմակերպում: Գյուղատնտեսական արտադրանքի և հատկապես վերամշակումից ստացված արտադրանքի արտահանումը երկրի զարգացման համար, բացի մակրոտնտեսական տեսանկյունից, կարևորվում է նաև դիվերսիֆիկացված իրացման շուկաների ձևավորումը, որի համար էլ անհրաժեշտ են`

- հարկային և մաքսային խթանների ստեղծում,
- ֆինանսական աջակցություն արտահանող ձեռնարկությունների ստեղծման և դրանց գործունեությունը ընդլայնելու,
- արտոնյալ ռեժիմով առևտրային շուկաների ստեղծում:

Արտահանվող ապրանքների տեսականու դիվերսիֆիկացման միջոցով ապրանքների արտահանման ծավալների ավելացումը, հանդիսանում է, որպես ռազմավարական խնդիր: Ցանկալի կլինի ստեղծել արտահանումը ապահովագրող պետական կառույց` մասնագիտացված արտահանման ռիսկերի գնահատման գործում:

Տնտեսական աճի հետ մեկտեղ արտահանման կառուցվածքում ավելացել է գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը: 2013 թվականին հանրապետությունից արտահանվել է շուրջ 64,5 հազար տոննա պտուղբանջարեղեն, խաղող ու կարտոֆիլ, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 2,1 անգամ: Մասնավորապես այստեղ արտադրված և դրանց վերամշակումից ստացվող ապրանքները կազմում են արտահանման շուրջ` 21.0%: Վերջին տարիներին վիճակագրական տվյալները վկայում են, որ գյուղատնտեսական ապրանքների արտահանման տեսակարար կշիռը դրա ընդհանուր ծավալում ունի աճման միտում: Այսպես, ըստ 2012թ –ի տվյալների այն կազմել է 22,5 %, որը 4,4 %-ով ավելի

³ Գյուղատնտեսության դերը աղքատության հաղթահարման գործում կարևոր է բո-լոր երկրներում: World Development Report 2008, Agriculture Delelopment, The World Bank.

է նախորդ տարվա ցուցանիշից, իսկ 2013թ, համապատասխան ցուցանիշը, կազմել է 22,1%, որն ավելի է նախորդից 0,6%-ով:

Գյուղատնտեսական արտադրանքի և դրա վերամշակման արդյունքում ստացված ապրանքների հիմնական տեսակները և դրանց տեսակարար կշիռը արտահանման մեջ ներկայացնենք աղյուսակում:

Աղյուսակ 1.⁴ Արտահանման կառուցվածքը

Արտահանման ապրանքներ	Տեսակարար կշիռը 2013թ. արտահանման մեջ%
Ոգելից և ոչ ոգելից խմիչքներ	13,5
Ձկնեղեն	1,5
Մրգեր և բանջարեղեն	2,0
Մրգերի, բանջարեղենի և բույսերի վերամշակմանարդյունքում ստացված սննդամթերք	1,2
Ծխախոտ	3,0
Ընդամենը	21,2

Արտահանման կառուցվածքում ավելացել է գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը: 2014թ. հանրապետությունից արտահանվել է մոտ 46,5 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող ու կարտոֆիլ, որից՝ 16,1 հազ տոննա բանջարեղեն և կարտոֆիլ, այդ թվում՝ 21,3 հազ. տոննա կարտոֆիլ: 2013թվականի նույն ժամանակահատվածում արտահանվել էր 64,5 հազ. տոննա պտուղ բանջարեղեն, խաղող ու կարտոֆիլ: 2014թ. արտահանման ծավալների նվազումը 2013թ համեմատությամբ պայմանավորված է ծիրանի սակավությամբ: Կարևորվում է արտահանման ոլորտում գյուղատնտեսության պոտենցիալի օգտագործումը, որը բնորոշում է գյուղատնտեսության զարգացման ընթացքը, որոնք պետք է օգտվեն և՛ պետական միջոցներից և՛ մասնավոր կապիտալից:

Համաշխարհային շուկաները զարգացող են, պահանջկոտ, որակի նկատմամբ զգայուն, և ամենակարևորը պահանջում են մեծ ծավալների կայուն մատակարարում: Ներկայումս շատ արտադրողների և վերամշակողների ներքին պահանջարկն է թելադրում սննդամթերքի անվտանգությունը և որակի բարելավման պահանջարկը: Առավել որակյալ ներկրվող ապրանքների առկայությունը պահանջում է գոյություն ունեցող ստանդարտների խըստացում, որակի կառավարման և անվտանգության ներքին վերահսկողության համակարգերի ներդրում, նորմատիվ ակտերի ընդունում, արդյունքում պահպանելով ներքին շուկան, ներկրվող սննդամթերքը փոխարինել տեղա-

⁴ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, հասարակության հետ կապերի ծառայություն:

կան արտադրությամբ և ընդլայնել արտահանման հնարավորությունները: Պետք է նշել այն իրողությունը, որ Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աշխարհագրությունը բավականին փոքր է, այն սահմանափակվում է մի քանի պետություններով՝ Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա, Բելոռուսիա: Բացի այդ, այն ունի հայկական մրգերի, բանջարեղենի արտահանման դիվերսիֆիկացիայի շատ ցածր մակարդակ, քանի որ մեծածավալ արտահանումների ավելի քան 71%-ը, բաժին է ընկնում Ռուսաստանին, և միաժամանակ, այն շուկան, որտեղ մեծապես ներկայացված են հայկական մրգերը դա Վրաստանն է: Գյուղմթերքների գնահատման ձևավորման գործընթացին կնպաստի նաև իրացման համակարգի կատարելագործման, տեխնիկական ապահովման, նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարման և այլ ոլորտների հիմնախնդիրների լուծումը:

Պետք է նշել, նաև այն իրողությունը, որ գյուղատնտեսության դերի զարգացմանը հանրապետությունում, իր անմիջական ազդեցությունն է թողնում նաև գյուղատնտեսական հումքի մթերման, իրացման գործընթացը: Այսպես, 2013թ. գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտին բաժին է ընկնում արդյունաբերական համախառն արտադրանքի մոտ 35,3 %-ը, 2014թ. այն կազմել է 38,3%: 2014թ. շուրջ 91 պտուղբանջարեղեն և խաղող վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է մոտ 232,1 հազ տոննա պտուղբանջարեղեն և խաղող, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 8,2 հազ. տոննայով կամ 3,6%-ով: Բարելավվել է մթերվող հումքի վճարումների գործընթացը, որը կազմել է շուրջ 99,0%: Մթերքների վաճառքի աջակցության համար մայրաքաղաքում հանգստյան օրերին կազմակերպվել է գյուղատնտեսական 2 տոնավաճառ: 2014թ. ընդլայնվել են գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունները: Մինչև պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների սկսվելը վերամշակող ընկերությունները գյուղացիական տնտեսությունների հետ կնքել էին 11965 պայմանագրային հարաբերություններ, որը 20%-ով գերազանցել էր նախորդ տարվա ցուցանիշը: Նշենք, որ գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 112,5 մլն կանխավճար և 675,1 մլն դրամի բուժանյութ, պարարտանյութ և այլն⁵: Սակայն, գյուղատնտեսությունը դեռևս հանդիսանում է Հայաստանի տնտեսության առավել խոցելի ոլորտներից մեկը, որը կարիք ունի հետևողական քաղաքականության: Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող բնութագրական կողմը այն է, որ ոլորտը ներկայացված է հիմնականում փոքր գյուղացիական տնտեսություններով, որոնք խոցելի են ոչ միայն շուկայից եկող տնտեսական դժվարություններից /ապրանքի գին, պա-հանջարկ/, այլև՝ բնական պայմաններից,

⁵ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքեր www.armstat.am

պետական ֆինանսավորման և նպատակադրված սուբսիդավորման սխեմաների բացակայությունից և մատչելի վարկային միջոցների հասանելիությունից:

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ագրարային ոլորտի դերը Հայաստանի տնտեսության զարգացման գործընթացում

Բանալի բառեր՝ տնտեսական աճ, վարկ, սննդամթերքի անվտանգություն

Գյուղատնտեսությունը ցանկացած երկրի իրական հատվածում ունի իր դերն ու նշանակությունը, հատկապես Հայաստանի տնտեսության զարգացման և կայունացման գործընթացում: Մի շարք խնդիրների լուծման համար երկրում բացակայում է համակարգված և հետևողական քաղաքականության իրականացումը, հիմնականում կապված ֆինանսավորման հետ և որպես գյուղատնտեսության զարգացման մեծ մարտահրավեր հանդիսանում է գյուղատնտեսական աշխատանքի ցածր արտադրողականությունը, որը ազդում է և՛ սննդամթերքի գների, և՛ բնակչության կենսամակարդակի, և գյուղմթերքի վերամշակման, արտահանման և իրացման ոլորտների գործընթացներին:

Лена ОГАНИСЯН

Роль аграрной сферы в развитии экономики Армении

Ключевые слова: экономический рост, кредит, продовольственная безопасность

Сельское хозяйство играет большую роль и имеет важное значение в реальном секторе каждой страны, особенно в развитии и стабилизации экономики Армении. В работе отмечается, что в решении ряда проблем в стране отсутствует системная и последовательная политика, в основе реализации которой лежит вопрос финансирования. Также отмечается, что в качестве основного вызова развитию сельского хозяйства выступает низкая производительность сельскохозяйственного труда, оказывающая влияние как на цены продовольственных товаров, так и на жизненный уровень населения и процессы в сферах переработки, экспорта и реализации сельскохозяйственной продукции.

Lena HOVHANNISYAN

THE ROLE OF AGRICULTURE SECTOR IN ECONOMIC DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: economic growth, food safety, loan, labor productivity

In any nation agriculture has its own role in the real sector of economy and its importance, namely in the development and sustainable growth of Armenia. In order to address various issues the nation lacks systemic, agreed and defined policy implementation, specifically related with the funding, and as a big challenge for the agriculture factor productivity is stressed that affects the prices of food products, and standards of living of population, agricultural production, exports and wholesale distribution and retailing.